ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հ.694-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Էստոնական փողոցի հ.12/3 հասցեում «Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությանը տրամադրված 331.2քմ շինության և 773քմ հողամասի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2035 թվականի հուլիսի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետարան Երևանի քաղաքի ավագանու 14.04.2015թ հ.315-Ա որոշմամբ անհատույց օգտագործման իրավունքով կազմակերությանը տրամադրված գույքի ժամկետը 10 /տասը/ տարով երկարաձգելու խնդրանքով:

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը լայնածավալ հասարակական, մշակութային, կրթական, սոցիալական, ռազմահայրենասիրական և գրահրատարակչական գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում: Միությունը համախմբում է Հայաստանում, սփյուռքում և պատմական հայրենիքում (հատկապես Սասունում և Մուշում) բնակվող տարոնցիներին, և նրանց ողջ մարդկային, կրթական, սոցիալ-մշակութային և ազգագրական ներուժը ծառայեցնում է Հայաստանի Հանրապետության հզորացման ու ազգային ծրագրերի իրագործմանը:

«Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպությունը հիմնադրման օրվանից մեծ դերակատարում ունի Հայաստանի սահմանների պաշտպանության և սերունդների հայրենասիրական դաստիարակության գործում: Միությունը երկար տարիներ իր գործունեությունը ծավալել է Էստոնական փողոցի հ.12/3 հասցեում՝ կատարելով բոլոր անհրաժեշտ ներդրումները կապված տարածքի պահպանման, վերանորոգման և բարեկարգման հետ:

Ներկայումս կազմակերպությունը ունի բարերարներ, որոնց նախատեսում են ներդրումներ իրականացնել կազմակերպության գործունեությունը խթանելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող տարածքը ունի լուրջ ամրացման և հիմանորոգման խնդիր՝ կազմակերպոության կողմից առաջարկվել է իրականացնել նշված աշխատանքներն առանց արտաքին որևէ ծավալային փոփոխությունների:

Քանի որ գույքի անհատույց օգտագործման ժամկետը 2025 թվականի լիանալու է, իսկ այդ ընթացում քննարկվող աշխատանքները հնարավոր չէ ավարտին հասցնել, ընկերության կողմից առաջարկվել է անհատույց օգտագործման ժամկետը երկարաձգել ևս 10/տասը/ տարի ժամկետով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գույքի նկատմամբ իրականացված և իրականացվող բոլոր բարևլավումները, ինչպես նաև ներդրումները մնալու են Երևան համայնքին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հ.694-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշումը նախագիծը, որով նախատեսվում է Էստոնական փողոցի հ.12/3 հասցեում գտնվող գույքի անհատույց

օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2035 թվականի հուլիսի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ